



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1999

3642

ԲԼԻՒՑԻՄ
Ի ԿՈՍՏԱՆԴՎԵԼՈՂԻ

ԿԱՄ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅՔ

Ե Ւ

ԲՐՈՒԺԱԿԱՆՏԱ



ՎՀ 253



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԵՄԻՅԵՐԻ ԽԼՄԻՑԵ

1870

40

Digitized by Google



A decorative horizontal border at the bottom of the page, featuring a repeating pattern of stylized flowers and leaves in a light blue-grey color.

338-60

28-341 2010.11. 小学数学教材 3 年级上册第 80 页

6581

Բ Ե Ւ Խ Ի Մ
Ի Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Օ Լ Ի Մ
Կ Ա Մ Ա Ր Ե Լ Ե Լ Ե Ա Ն Հ Ա Յ Ք
Ե Ւ Բ Ա Բ Ա Կ Ա Ն Տ Ա

Հ Ա Յ Ա ղ դ ի ս կ ա թ ո ղ ի կ է ա ն ո ւ ա ն ե ա լ մ ա ս ի ն վ է .
Ֆ ը ն դ ժ ա մ ա ն ա կ ս ժ ա մ ա ն ա կ ս ա յ լ ե ւ ա յ լ կ ե ր պ ա -
ր ա ն ե ք ն ե ր ա ռ ա ւ . վ ե ր ջ ի ն ժ ա մ ա ն ա կ ն ե ր ը ա յ լ փ ո -
փ ո խ ո ւ թ ի ւ ն ն ե ր ը ա ւ ե լ ի ս տ է պ ե ն , ո ր է վ է ճ ի ն
կ ե ն դ ա ն ո ւ թ ե ա ն ե լ ն շ ա ն ։ Բ ա յ ց ք ա ն ի ո ր ա ր ա դ ա -
ք ա յ լ ա ր շ ա ւ ե լ ո վ ի կ ա ր ծ ե ս թ է կ ը մ ե ր ծ ե ն ա յ ի ւ ր
լ ո ւ ծ մ ա ն ը , հ ա ր կ կ ը ս ե ա լ ո ւ ի ա ւ ե լ ի մ ո տ ա դ ր ո -
թ ե ա մ ի ք ն ն ե լ պ ա ր ա դ ա ն ե ր ը , ե ւ գ ո ր ծ ո յ ն յ ա շ ո -
զ ո ւ թ ե ա ն զ գ ո ւ չ ա ւ ո ր ն կ ա տ ո լ ո ւ թ ի ւ ն ն ե ր ը ը ն ե լ ։
Ա յ ս դ է պ ա ք ե ր է ս մ է կ ն է Մ օ ն ս ի ն ե օ ր Բ լ ի ւ յ ի մ ի ՚ ի կ ո ո -
տ ա ն դ ն ո ւ պ օ լ ի ս հ ա մ ն ի լ ը ի 3/21 մ ա ր տ ի , ն ո ւ ի ր ա կ
խ ր կ ո ւ ե լ ո վ ՚ ի չ ո ո վ ի մ ա յ ։

Հոռվել մինչեւ ցայսօր այս ժողովրդեանո հետ
ողբակի բանակցելէն եւ անոր միտքը կամ կամքը
հարցնելէն հեռու բռնած էր ինքը զինքը : Թուի
թէ իրեն քաղաքադիտականին մէկ էական պայ-
ման մը դրած էր զԱզգը ամենեւին չխոռնելիսընդ-
լոյ մը մէջ, որքան ամենայն ումեք Ազգին կը վե-

րաբերէր : Յայտնի է ամենուն Հռովմայ անպատաս-
խանի ձգելը Ժողովրդեան թղթերը , եւ իւր այս
լուսթիւնը աշխարհաքարով ըրաւ ինքն իւր փե-
տըր . 18ին խրկած համբաւաւոր հեռադիրներով :
Կը գուշակէր անշուշտ Հռովմ ժողովրդեան միտքը
եւ անոր կամքը իւր աղդային իրաւանց խնդրոյն
նկատմամբ : Ուստի զամենայն լուսթիւն կը պահէր,
եւ 'ի ծածուկ Աղդային գործոց վրայ սահմաններ
կը դնէր եւ կարդադրութիւններ կ'ընէր քանի մը
արբանեակներովլը : Խորագիտութիւն էր լուսթիւ-
նը , բայց իւր խորագիտութիւնը խորագիտութոյն
կը լլար , եթէ քաջ հաշիւ ընէր , թէ մինչեւ ցվերը
կարենար պիտի նոյն ամրապահեստ լուսթեանը
մէջ կենալ , Ռորով չէր իյնար այն անկարկատելի
հակասութեան մէջ որով մինչդեռ փետր . 18 ին
հեռադիրը դատապարտել կը վճռէր ժողովրդեանս
բողոքը , ուղերձը , բաղձանքը , եւ պատասխանոյ
անարժան , — միւս կողմանէ իւր ընկերակցին հե-
ռադիրը կ'աղդէր թէ Բլիյսմ կը խրկուի կը նը-
ուիրակութեամբ 'ի կոստանդնուպոլիս :

Բլիյսմ ուրեմն բունի կուգայ 'ի Պոլիս , եւ
Հռովմ յակամայս խոնարհած կ'ըլլայ 'ի դիջողու-
թիւն եւ յունկնդրութիւն իւր հերքելի , մերժելի
փետելի , դատապարտելի ժողովրդեան գանդա-
տանաց եւ բողոքին : — Հարկ ուրեմն է մեղ քըն-
նել եւ իմանալ եղած պարագաները , որպէս զի
սույզ գուշակենք պատգամաւորին միտքը , եւ
գիտնանք թէ ընդ ում բանակցի :

Եթէ այդպէս առաջի գնելու ըլլամք խնդիրը
թէ Հռովմ բռնադատութեամբ եկաւ այդ բանակ-
ցութեան , աեղի չմնար տարակուսելու թէ դառ-

նսթիւնը ընթացակից պիտի ըլլայ այդ գործոյն :
Եւ այդ գառնութեան արմատին ջղերը եւ ե-
րակները մանրամասն կ'երեւան հեռագրոյն տա-
ռիցը մէջ մտադիր ընթերցողին : Այդ գառնու-
թեան ժամանակ երկնած խորհուրդ մը կարելի չէ
որ քաղցրահամ պառող մը յառաջ բերէ : Սակայն
մենք ոչ մեր խոհեմութենէն ետ կենամք , եւ ոչ
ալ անաշառութենէ : Զըլլայ թէ մեր զգացած օ-
րինաւոր տհաճութիւննիս ընդդէմ ընթացից Հը-
ռովմայ զմեղ չարաչար եւ յանդուգն քալցնէ , եւ
ոչ ալ անտեղի երկիւղը կոմ տկարութիւնը մոլոր-
ցընէ զմեզ , եւ մահու գեղը իրբեւ կենաց գեղ
մեզի ճաշակել տայ :

Հռովմ որ 'ի հարկէ բռնադատեալ այդ նուի-
րակութիւնը մեղի կը խրկէ , երկու կերպա-
նօք կրնայ մեղի ներկայանալ , կամ անկեղծ եւ
յայտնի կերպարան քով իւր զայրոյթը խսկ եւ խկ
երեւցնելով , ինչպէս որ հեռադիրները կը սպառ-
նային . եւ կամ կեղծուպատիր եւ շողոքորթական
կերպերով : Մէկը զինական պատրաստութեամք եւ
սուր ճիրաններով կը գիմէ եւ կը բռնէ որսը , եւ
միւսը դաւադիր որոգայթով : Եթէ համարիմք որ
զառաջինը կատարեց գեր . Առաքելեանին ձե-
ռօք , եւ փորձով խմացաւ , թէ սննդորհուրդ էր
այդ ճամբան , եւ իւր ձեռաց մէջ վշրեցան իւր
զէնքերն , եւ որմն ալ ձեռքէն պրծաւ , — կը մնայ
ուրեմն հիմա որ երկրորդ եղանակաւը վարուի , եւ
այն խսկ է անշուշտ Մօնսինեօր Բլիյսմին յանձնը-
ված գործը :

Հռովմ եթէ իրօք զիջողութիւն գործածէ , եւ
եթէ առ երես քաղցրացնութիւն , եւ ինչպէս ըսկն

ոմանք, գինառյն մէջ ջուր խառնել ուղենայ, այլ
մատուռակ քան զթիւյիմ յարմարագոյն առ այդ
չեր կարող դոնել: — Բլիւյիմ առաջին անգամ չէ
որ ի Պոլիս կուղայ, եւ ոչ առաջին անգամ որ աղ-
գային գործոց մէջ կը մանէ, ներկայ գտնուեցաւ
Աղբային Սիւնհովսին յորում, ժամանակն է ըսել
Աղբային իրաւանց դէմ եւ նոյն իսկ այժմեան
խնդրոյս հակառակ պաշտօն մը կատարեց, ներկա-
յացուցիչ ըլլալով իրեւ բարձրաքանիդակ խորա-
գիր մը, Հոռվլայի իշխանապետութեանը Սիւնհո-
դոսի Աղբային վահճին մէջ: Բայց ամենայն եղա-
նական եւ ճամբով ապօրինաւոր էր այդ ժողո-
վը, եւ այդ ալ նոյն անկարգութեանց մեկը սեպուի:
Թէպէսեւ անողի էր եւ անդործունեայ Բլիւյիմի
այդ ներկայութիւնը, որովհետեւ հրաշափառագոյն
եւ ջերմագոյն քանդինքն գործունեայ պաշտօնեայ
մը կար հանդերձ քանի մը արբանեկօք աղբային
հանդերձին տակ Հոռվլայ ներքին խորհուրդները
կատարելու, սակայն բաւական էր Հոռվլայ քա-
ղաքաղիտութեանը այդ եռանկիւնի դի խարկին
ներկայութիւնը, որ յամենայնի կ'ուղէ միշամուխ
ըլլալ, եւ յամենայնի նախագահ բազմիլ, եւս ա-
ռաւելիքս Արեւելեայց, որոնց գերութիւնը սա-
կաւ առ սակաւ յօրէնս կ'ուղէ անցունել: — Բլիւյիմ
թէ եւ իր Հոռվլայ փոխանորդ կը բազմէր հոն
բայց Հառունեանը անլսող եւ անմտագիր իրեն՝
համարձակ կը վճռէր, կը հասաւատէր, կը բառ-
նայր, կը դնէր ամեն բան ինչ որ կուղէր, առանց
այդ իրաւակին մասիկ ընելու: Սակայն աներկաս-
յելի է թէ կայր մէջերնին տարածայնութեան եւ

ըեւոյթ մը: Այդ տարածայնութիւնը ինչ պատ-
ճառէ ալ առաջ եկած ըլլալ, եւ թէ եւ առ երե-
սըս, բաւական էր այն ժողովրդեանս սիրելի ընեւ-
լու զինքը Բլիւյիմ, եւ ժողովրդեանս պարզասիրտ
վատահութեանը արժանի սեպուելու: Եւ ժողո-
վրդեան Բլիւյիմն վրայ ցուցած վատահութիւնը
այնքան եղաւ, որ 'ի Հոռվլմ կասկածելի ըրաւ զին-
քը, եւ Բլիւյիմ այդ տարագիւպ եւ անօգուտ սի-
րուհին վրայէն ուղեց թօթավինը, փութալով ան-
սրխարութեան նորագիւտ կղզին ենել: — Այդպի-
սի ոմն էր ուրեմն Բլիւյիմ, երբոր առ ժողովութե-
իրը հաշտարար նուիրակ խրկութին որոշուեցաւ:

Արդ ուրեմն ժողովրդեանս սիրելին եւ ծա-
նօթն Բլիւյիմ կը խրկուի առ մեզ, բայց Աղբիս
եւ անոր իրաւանց հակառակուրդէն, եւ ինչոքէս
ըսինք, յանձնարարութեամբ անուշ երես ցուցը-
նելու, եւ ամոքիչ հաշտարար վանդերով հիւսն-
լու իւր խօսքերը: — բայց չխարուինք, եւ կրկն
կրում, չխարուինք, որ իւր բուն գալսնի պաշ-
տօնը այլ ինչ է քան զժողովուրդեանս ուղածը:

Սիրելի եւ ծանօթ ազգիս կոչեցինք զբլիւյիմ: —
բայց նստինք առանձին նսխի դայն քննեմք թէ
իրօք ծանուցեալ է Աղբիս, եւ թէ յիրաւի սիրե-
լի՞ է Աղբիս եւ սիրող զազգս: — Արդ ինչպիսի՞ոք
կը ճանչնամք զբլիւյիմ: — Սակաւ ժամանակեայ
փորձ եւ ծանօթութիւն մը ստացեր եմք վրան,
սակայն եթէ արտաքին տեսքը նայիմք նախ, իսկ
մաքուր եւ քաղաքավար մէկը կ'երեւայ, դէմքը
եւ շրթունքը միագոյն ջերմակ, հանդերձ նեմցէի
ծանրութեամբ, Հողանատոցոց ոչ խուժիւ առ սա-
կաւ մի համեմեալ: Ունի ճարտարութիւն երկու

այտերը ըստ հարկին երկու կողմէն վեր ցըսունելու, որ կրնան աջին ալ՝ ձախին ալ ժպտալից եւ անուշ ձեւ մը տալ : — կը մնայ ներքին հոդւոյն եւ մոտաց զգաց մանը քննութիւնը : Ծա՛նր խնդիր : Խոհեմըսուած եւ հարեւանցի դիտող անձանց վկայութեան թէ որ լսեմք հաւնելու եմք, եւ ընդհանրապէս կար ճառօտ տեսութեան մը միայն պատահելով հաւնելու աչօք նայեր եմք, եւ վրան քիչ շատ յարդ մը ստացեր եմք, եւ սիրոյ յարումը կարծեմ տըսեր ենք աւելի այն կարծիքէն շարժեալ թէ Աղդիս, եւ առ հասարակ Արեւելքայց սիրող է բըսնութեամք, եւ անոնց մշտստանց վիճակին վրայ կարեկցութեան դութ եւ գորով կը ցուցնէ, եւ քիչ շատ մեղադրութեանց ձեւ անոր հարստահաշրովաց համար :

Յիրաւի ախորժելի յատկութիւններ, եւ ժամանակիս յարմար այսպիսի մէկ մը գտնուելու այն աթոռոյն վրայ, որ կը բաղմի ինչպէս որ եղաւ ատենօք ելքը Գաղղիացի եպիսկոպոսը, արդարակորով մարդ : Սակայն անհաստատ է մարդկային բնութիւնս, եւ այս տխուր տկարութիւնն ալ ունի, որ ժամանակի, տեղոյ եւ այլ եւ այլ պարագայից հետ շիռելով բան կ'ըլլայ որ իրմէ անոնց կը ձգէ, եւ բան կը լլայ որ անոնցմէ կ'առնէ : Վերջապէս կ'երթայ Բլիյիմ ի չոռվմ, եւ ահա քանի մը ամսէ ետքը Աղքիս հակառակորդէն նուիրակութեան մասնաւոր պաշտամամբ մը կը վերադառնայ հոս : Պաշտօն մը որ պէտք է սկզբնական մեղք մը ունենայ, պաշտօն՝ որ կ'ենթադրէ թէ մերձեցողն հարկ է որ բանէ մը պլըշաըկած ըլլայ : « Միթէ մարդ ինչ իցէ ի Գալիւեն

բարւոյ իմիք լինել » : Կը քննեմք եւ հարցափորձ կը ուսուղ եմք որ Ազգիւ կարծած եւ երեւակայած անկողմնասէր, եւ արդարակորով եւ անշահախընդիմի մարդը քանի՛ դժուարին է դանելը : Ի Հըսովմյուղեալ նորանշան խնդիր մը որ է Պատին անձնական անսխալութիւնը՝ փորձաքար մը եղաւ դըրեթէ ամենեցուն բնութեանը եւ կարծեաց որ նոյն խնդրոյս վրայ վճիռ պիտի տային : Բազմախուռան խեղճ եպիսկոպոսաց խառնիճաղանճին առջեւ խոյժ մը նետուեցաւ Կ'չռպմայ՝ իրենց շահախնդիր ըլլածից կատարումը փոխարէն գնելով անոնց, թէ որ հոն գրուելու ըլլան : Եւ ահա վաղող վաղողի, եւ թէ միամիտք, եւ եթէ խորամիտք միանդամոյն ստորագրելու : Հռովմայ քաղքին հիմնարկութիւնը կը յիշեմ, ուր հիմնարկուն բացաւ դռները անոնց, որ պատապարան մը կը խնդրէն, եւ թիկունք, եւ եթէ հոն մէկը արդար ալ դանուեր՝ կասկածելի էր : Սստանօր ընթերցողք, եւ ժողովը պըրդեանս վէճին քննադատք եւ իրաւադէտք ներեն մեր անաշառ ըլլանուս եւ համարձակախօս : Արդեօք ներելի՞ էր Բլիյիմայ ալ մեր եպիսկոպոսաց հետ խօսակցելու եւ խորհրդակցելու ատենայս իրենց դատին համար՝ իրենց յաջողութեանը փրկարար մէկ հատիկ միջոց այդ անսխալութեան ալեաց վրայ տատանող անհիմն լաստափայտին պլըուելու խորհուրդը եւ յորդորը տալ : Բլիյիմ այդու խրատու կամ անխորհուրդ բարեկամ դանուեցաւ, կամ չարախսորհուրդ թըշնամի : Զեմք քններ թէ ի՞նչպէս կարելի էր այդ խորհրդ եան յաջողութիւնը, որ ինքն արթուն հա-

կառակորդն Հանունեանն, որ չէր վրիպեցուանէր աշքէն եւ ոչ մէկ առիթ մը, յորմէ կընար իւր վըտանգաւոր եւ գժուարին գործոյն յաջողութեանը համար օդնութիւն մը գտնել, առաջին եղած էր իւր ստորագրութիւնը տալու : Զէ՞ր գիտեր Բըլիւյիմ որ մեր հակառակորդը այդ գաշախն մէջ խաղալու քանզինքը եթէ տարեօք եւ եթէ փորձիւ շատ աւելի ճարտար էր եւ հմուտ : Բայց առաւել քան դդոսա չէ՞ր գիտեր Բլիւյիմ, եթէ մեր ազգային խնդրոյն թափանձանց էր եւ խորամուխ թէ այդ անսխալութիւնը ամենեւին անհամաձայն էր մեր խնդրոյն հետ, եւ մանաւանդ թէ ամենեւին հակառակ :

Թէ որ իրօք այդպիսի խորհուրդ մը տուած է Բլիւյիմ, ոչ զխորագէտը տուած է, եւ ոչ ալ զարդարն եւ զօրինաւոր : Պատին անսխալութեան խնդիրը՝ արդարեւ ամենածանր խընդիր, քանզի հաւատոյ մասն պիտի սեպուի, եւ ընդհանուր հաւատացելոց խղճին վրայ պիտի ծանրացունէ ամենարեռն պարտք մը, անոր համար է որ եկեղեցւոյ հարց մէջ այնչափ ընդդիմութիւն կը կրէ, եւ որուն համար խոհական եւ աստուածարեալ հայրապետք զդուշաւոր քննութեանց, եւ բիւր հարցափորձի տակ կուղեն ձգել, եւ Հոգւոյն սրբոյ շնորհքը կը հայցեն, որ պէս զի չըլւայթէ Եկեղեցւոյ հաւատոյ սրբութեան գանձարանը մարմնեղէն եւ մարդկային պըղծութեամբ արատաւորեն, — եւ թող զայլ բիւրաւոր ծանր պատճառները : Խոկ ահա նոյն ժամանակ անդիէն եպիսկոպոսաց խումբ մը կ'ենէ իւառը ուն 'ի խուռն արշաւելով անկէ իրեն շահավաճառ

ընելու : Շահավաճառ ընելո՞ւ, հաւատոյ վարդապետութիւնն մը, քրիստոնէից իւթեանց հայուն իւղանին ծանրութիւնը, եղբերելի շահ, եւ քատարութիւնը յացի՞չ պատճառաւա : Ո՞ր քրիստոնէական օդույն արդարութիւն է յորդորելը : Ար շահու համար ճշմարիս վարդապետութեանց կարգը անցունել տայր վարդապետութիւն մը որ կարեւէ թէ սուտը լւայ : Բայց սույր՝ որ կասկածելի ըլլայ, եւ ամենասույր՝ որ վասակար ըլլայ : Շահու համար սուտթիւն մը ճշմարիտ բաելով հաւատալեաց կարդը անցունել տալ, ուրացաւթիւն է հաւատար այնոմ, որ շահու համար հաւատոյ ճշմարտութիւն մը կուրանայ : Արդ այդպիսի խրատու մը չկընար մեզի յուսացնել որ մարդկային նկատմանց դիմաց ըստիարականայ, եւ չը համաձայնի ընդ այնոսիկ զմեզդ դատավարաւելու, որ իբրեւ հաւատոյ ուղիղ վարդապետութեան եւ հանդանակին դէմ հայհյութիւն կը բամբասեն ազգային իրաւանց պաշտպանութիւնը, եւ միուլ բանիւ չդաշնագրի նոյն խոկ մեր մահուչափ թշնամեաց հետ : — Բայց թէ իրօք Բլիւյիմ այդ խորհուրդը կամ խրատ տուած ըլլայ, մեք չէաք 'ի Հռովմ որ լսէինք եւ հաստատենք, բայց թէ ինքն ալ անսխալութեան վարդապետութիւնը մէկն եղած է, գժբաղդաբար ամենասույր է :

Արդ ահա այդպիսի պատճամաւոր մըն է որ հրահանգ առած եկեր է մեղմով եւ քաղցրութեամբ շահեւ զժողովուրդը եւ հաշտութեան միշոյ մը դտնել : Ո՞ր կընայ ըլլալայդ հաշտութեան պայմանը, որ մեղի առաջարկէ : Կը ճանչնամք մեր հակառակորդին հին զէնքերը, երկբայութիւն չը

կայ որ նա իւր հնացեալ սկզբունքներէն ետ չը-
կենար, յորոց զբազումն հեթանոս աշխարհակա-
լութենէն իրբեւ աւանդ եւ իրբեւ արուեստ ժա-
ռանդած է: Բաժանել եւ ոիրեւ, իւր քաղաքագիւ-
տութեան առաջին բանալին է ամենէն ամրապինդ-
դունափակները բանալու: Քննենք մեք զմեղ ու շի-
ուշով թէ արգեօք յԱղ դիս՝ այս սերտ միտթեան
ժամանակ ալ կայ բաժանելի տարր մը, որ չվը-
րփի հակառակորդին սրատես աչքէն: — Այս :

Ժողովուրդը Հասունի հետ կոռուելու ատեն
երկու զատ եւ որոշ զբածումն յայտնեց, եւ կըո-
ւոյն նպատակը անոր վրայ դրաւ: Ժողովրդեան
մէկ մասը խնդիրը մէկ կողմէն միոյն տեսաւ, եւ
մէկալ մասը ուրիշ կողմէն, բայց երկուքն ալ միա-
գունդ եւ միաբան կոռուեցան: Մէկ մասը կըո-
ւեցաւ աղդային իրաւոնքները ըստ ամենայնի
եւ անիմէրի պահելու վրայ: կոռուեցաւ արեւե-
լականութիւնը անխառն պահելու վրայ, կոռուե-
ցաւ իւր աղդութեանը դէմ դիմեալ սկզբան մը
դէմ, եւ ուր տեղէն աղդիս վրայ կործանիչյար-
ձակումն կուդար, անոր դէմ կոխւ բացաւ: — իսկ
երկուրդը տեսնելով որ Աղդիս մէջ ամեն չարեւց
պատճառը Հասունն է, իրեն կոխւը դարձուց Հա-
սունին դէմ: ուստի ասոնց բուն կոխւն էր ուղղա-
կի Հասունի անձին դէմ: ըսել է որ եթէ Հասունը
վերցուեր, իրենց կամքին համնելով ալ կոխւ ընե-
լու բան չին ունենար: Բայց բարեքաղդաբար ոչ
ոք կը մնայ այսօր այս կարծիքէն: Ասովյացնի
կըլլայ որ այս մարդիկը սուրի դէմ կը կոռուէին,
իսկ առաջինները սուրը շարժողին դէմ: Այս եր-

կու զանազանութիւնները իրարմէ աղէկ որոշելը
շատ հարկաւոր է թլիւյիմին հետ բանակցութեան
մոնելէն առաջ: — Ահաւասիկ Հոռվմայ բնտուած ան-
նըշմարելի ճեղքը, զօր իւր բաժանմանը առիթ
պիտի առնու, եւ երկրորդ մասին կուսակցութեան
կոնակ կենալով, այսինքն զշառունը մերժել,
բայց ազգային իրաւունքէն զանց առնել տալավ,
բաժնէ եւ զատանէ այդ երկու միաբանութիւնը
զօրութիւնները, որոնց մէկուն դիտած ճամբան
յարեւելս կը տանի, եւ միւս յարեւմուսաւ:

Կայ միւս երկպառակտիչ զէնք մըն ալ Հոռվմայ
ճեղքը, այս է զեկեղեցականաց դասը բաժնել
Ազգէն, բայց այդ քահանայիցդ կի յնայ պատաս-
խանել, թէ այդ հաւատոյ խնդիր է, թէ աղդա-
յին: կընար չզատուիլ Ազգէն, եւ հաւատոյ մէջ հաս-
ատուն մնալ: Սակայն արիանան եւ ոչ ուստեք
վախնան քահանայիցդ: նոքա ընդ աղդին ըլ-
լան: Ազգն արգէն մինչեւ ցմահ իրենց հետ է:
Շատ է Աստուծոյ առջեւ անխիլն ըլլանին: Թող
մարդիկ զիրենք հալածեն, եւ իրենցմէ դուրս
հանեն ըստ Աւետարանին: — Բայց դառնամք մեք
դարձեալ մեր խորհրդածութեանցը:

Զիք երկրայութիւն որ Հոռվմայ կեղծաւոր-
եալ քաղցրաբանութիւնը այս խնդրոյն վրայօք
պիտի ըլլայ, որուն համար պէտք է արթուն ըլ-
լալ եւ չը խաբուիլ: Պիտի մեղմեխաբանէ համո-
զել զլոգդը որ Հոռվմ Հասունը զոհել յանձն կառ-
նու, միայն թէ իրաւանց խօսքը չըլլուի: Եւ քա-
նի՞յարմար թլիւյիմի բերնին այդ պատգամաւորու-
թիւնը, մինչդեռ նոյն բերանն է որ կը համբաւի
թէ ըստած ըլլայ: « Քանի որ ՚ի Պոլիս Ազգը Հա-

սունին դէմ գանդ ատ ունէր , եւ իրեն կողմը բըռ-
նեցի , ետքէն տեսնելով որ իրաւոնքները պաշտ-
պանելու ելաւ , եւ ալ չեմ կրնասր անոր դատը-
պաշտպանել , եւ անոր կուսակցութիւն ընել » :

Եթէ ստոյդ է եւ այդ խօսքը , (զոր իւր բըռ-
նած ճամբան պիտի յայտնէ քիչ ատենէ) ի՞նչպէս
կարելի է որ այդպիսի մերժելի եւ հոյրապետա-
կան աթոռոյ անսարքան անձին հետ միտքանի հի-
մա , այն գործոյն համար , որուն համար էր որ Հա-
սունը կը բամբասուէր յայնժամ որ էր այս ազգա-
յին իրաւանց բռնաբարութիւնը : Ի՞նչ կը համա-
րէր Բլիյիմ Ազգին այդ բազմաշվովթ յուզումը եւ
անդադարելի վէճը . միթէ նիւթական շահո՞ւ վէճ ,
եւ կամ անձնական ատելութեամբ մը շարժեալ
գրգռութիւն : Եթէ այնպիսի ինչ ըլլար , իւր ընդ-
այնպիսւոյ Ազգին ան ատենուան բռնած կուսակ-
ցութիւնը չէր արդարանար յաւիտեան : — Բայց
թէ անոր համար կը հալածէր ղջասուն , վասն զի
խոռոշութեան առիթէ , — արդ Բլիյիմ լաւ քան
զմեղ դիտէ , որ Հասուն զործիք մըն է , եւ բուն
խոռոշութեան սկզբնապատճառը նա ինքն է Բրո-
բականտայն , եւ նորա առաւելազանց տիրապե-
տութեան ոդին . — եւ անտի ազատանալ կը բըն-
ալուէ Ազգս եւ Արեւելք եւ Արեւմուտք :

Այս , չխաբենք զմեղ եւ չխաբուինք . Հա-
սունը չէ մեր բուն հակառակորդը , եւ մեր բուն
խոռոշարարը , այլ Բրոբականտայն է . Ազգիս ազե-
տից պատճառ ցարդ ոչ թէ Հասունն է , այլ Բրո-
բականտայն . անոր հակազդային ոդին է , անոր ի
կատինականութեան տարածիչ ոդին է , անոր ի

բազմաց հետէ երկնած Աստուածակետական միա-
հեծան իշխանապետութիւնը , որուն մէկ ոտքը
յարեւմուտան հաստատելն վերջը , երբոր սկսու-
յոգնիլ ու տկարանալ , սկսաւ արդ գէպ յՈրեւե-
լը յենուլ : Հասունը Հուովմայ կամաց գործիք է ,
եւ ոչ այլ ինչ : Հասունին հետ հակառակելով եւ
Հասունը վերցունելով՝ գործիքը վերուցած կ'ըւ-
լանք , գործիքը շարժողը վերուցած չեմք ըլլար :
Հասուն գործիքը գիւրինէ աներեւոյթ ընել կար-
միր ծիրանոյ մը տակ զինքը ծածկնելով , բայց
գործիք շատ : Քանի որ շարժիչ պատճառը կե-
ցած է , թէպէտ եւ Հասուն ի չիք դառնայ , կը-
ուիւր միշտ պիտի շարունակէ : Հասունը վերցուի
նէ , տեղը Առաքելեան մը կուգայ . Առաքելեանը
վերցուի , Բլիյիմ մը կուգայ . Վերջապէս ետեւէ
ետեւ կուգան ու կուգան , ամենն ալ մէկը խիստ
կերպով , եւ մէկալը կակուղ կերպով՝ նոյն ազգա-
կործան սկզբանց հաւատարիմ պաշտօնեայք : Քա-
նի որ այս չար եւ ամենայն իշխանութիւններու
թշնամի սկզբունքը տիրութ է ի Հռովմ , եւ մեր
վրայ մասնաւոր կերպով կ'ուղէ բռնանալ , ոչ
մեք , ոչ մեր որդիքը , եւ ոչ մեր թոռները , եւ
ոչ մեր եօթը պորաը խաղաղութիւն աեմնալ իք
ունին :

Ուստի Բլիյիմէն մտնաւանդ Ազգին պահանջ-
մունքը ոչ թէ միայն Հասունին վերցուիւր պիտի
ըլլայ , այլ նաեւ իւր ամեն յափշտակուած Ազ-
գային իրաւանց ետ գառնալը , իւսմ թէ ըսենք
բացարձակ կերպով յայտնելը Ազգին անոնցմէ
հրաժարելը : Իսկ թէ որ անոր որոդայթաւոր
խօսքերէն խաբուելով , գոհ ըլլայ եւ միայն Հա-

սունի վերնալովը, դիտնայ որ կորսուած է, եւ յաւ լիտեան կորսուած :

Սաքերնուս առջեւ բերենք այն երկու նշանաւոր դիպուածները, որ ահա քիչ օրերուս մէջ պատահեցաւ մէկը մեր աշքին դիմաց, եւ միւսը ի Հռովմ։ Առանց դատի, առանց օրինաւոր դատախաղի, առանց քննութեան եւ առանց հարցափորձի Ազգային եսլիսկոպոս մը, Ազգային Սիւն հողուէ ընարժուած, եւ միաձայն ժողովրդէս դոկեալ Հոյցրավես մը, յանկարծ նախատակոծ եւ ոնհարդ ական կերպով, իբրեւ սինքոր յանցաւոր, առանց պատկառելու յուլեացն եւ ի պատույն, կը հաւանի Հռովմ։ Եւ հոն դարձեալ ի Հռովմ ի մօտ աւուրս, մէջ քիչ մը տակ՝ տիեզերական առևուն մը առջեւ, ոչ ըշ Ազգային արքեպիսկոպոսի մը զբայ ահային եւ բուռն սպառնալիք կ'ու զին զինքը ուստկառելի միաբանութեան մը Երբայութենէն ձգելու, եւ միանդամայն իր Արքեպիսկոպոսական աթոռէն ալ հրաժարեցունելու : — Պատճառ . — չիք պատճառ, իրենք դիտեն, զի հարցունելու, քննելու եւ աեղեկանալու անկարօտ են : Ահա այդ աստիճանի հասած է այդ Բրոբականստայիդ անհնարին իշխանականական բռնաւորութիւնը յետին լրբութեամբ, որ ոչ եսլիսկոպոսական պատույն ակն ածէ, եւ ոչ Ազգէ մը երեսփոխաններուն եւ հայրապետացը մեծարանք կ'ընծայէ զորոնք իբրեւ ծառայ եւ սորուկ կը դորձածէ, ոչ միանգամ եւ ոչ երկու : — Ահաւասիկ Բլիւյիմի գտնալիքը՝ խոալութեան բուն դրդուէլ եւ ոկրնառողատճառը :

Ահաւասիկ ասոնք հաւաստի եւ անժխտելի դործք, որոց գոհ եմք կատարութելուն, եւ Աստուծոյ նախախնամութեան ցոյցք, որ հեռագրական լուրերը ուշ համելով 'ի Հոռովմ, Բրօբական տայի երկնած որոգայթները յայտնուեցան, եւ հասկցուեցաւ իւր մեծ դաւաճանութիւնը եւ բրոնթիւնը որ պատրաստուեր է եղեր ընելու Ազգիս ամեն մէկ եպիսկոպոսաց վրայ, եթէ Ազգային իրաւանց պաշտպանութեան ջատագովութիւն մը ընելու համարձակէին : Արդ քանի որ Պառնապոյի եւ Հասունի բռնաբարութեանց չափը այս աստիճանի հասած կը տեսնեմք, քանի որ կը տեսնեմք որ իրենց նկատեալ անօրէն խորհուրդներէն բնաւ ետ չպիտի կենան, քանի որ մեր ձեռքք ապահով երաշխաւորութիւն մը չկայ, եւ քանի որ ստուգապէս գիտեմք որ Հռովմ իր ազգակործան միտքը միշտ ամենայն եղանակաւ յառաջ տանել պիտի ուզենայ, — ոչ երբէք իմաստութիւն է մեղ մեր ձայնը եւ աղաղակը իշեցունել եւ խաղաղել, մինչեւ որ ազգային իրաւունքները եւ մեր նախական աղատութիւնը չամրացունեմք եւ չապահովեմք դաշնագրաւ հաստատեալ եւ վաւերացեալ նաեւ Օսմանեան պետութեան կնքովը :

Արդ յայտնի գիտնայ Բլիւյիմ, որ Ազգիս վէճը անձնական չէ, եւ ոչ ալ ընդ Հասունի անձնական ընդդիմութիւն մը ունիմք . այդչափ մեծ ոք չեմք համարիր զահասունդ, մինչեւ ազգովին, ո ինիմք իրեն հակառակ, եւ այդչափ վեր 'ի վայր յուղեմք զաշխարհ : Ոչ անձի մը համար է կռիւը այլ սկզբանց պատերազմ : Եւ սկզբանց պատերազմքան վամենայն պատերազմունս ահեղ է եւ արիւ-

նահեղ զիսարէ ինքը ինքը թլիւյիմ ։ Իսկ եթէ թը լիւյիմի, եւ իւր նմանեաց կարծիքն եւ պատճառ ուղն այս ըլլայ, (թէ որ կարենայ պատճառ անուանել), թէ կարելի չէ բնաւ Հռովմայ հետ դլուխ ելլել, եւ անհնար է անոր յափշտակածը ճիրամներէն ճոգովրել, ուրեմն ըսել կ'ուղէ թէ Հռովմայ արդարութեան օրէնքը բանութիւնն է ։ Եւ եթէ այդ այդպէս է, ինչո՞ւ այդ ստովին ծառայական պաշտօնը յանձն կ'առնու կատարելու, դործ մը որուն ոչ միտքը համողուած է, եւ ոչ արդար կը դատէ ։ Գառնամք ուրեմն վերստին վերոյիշեալ խօսքին եւ սկզբանց, այն թէ շահու համար ըսկ կղբունք մը կրնայ եղեր քարտուխլ, կամ թէ ըսենք շահու վրայ հիմնել զամենայն դործ ։ Սակայն զայդ դիտեմք, որ այդ չէ առաքինութիւն, ոչ քրիստոնէական եղբայրսիրութիւն եւ ոչ աստուածավայել կրօնասիրութիւն, որուն դրօշակիրք նուքին իսկ Աստուծոյ անուանը անուանակիրքն են եւ Աստուծոյ անուան աւետարանիչ հայրապետք ։

Վերջ տանք խօսքերնուս թէ ուրեմն թլիւյիմին հոս խաւրուիլը վճռական վախճանի մը պիտի չըծառայէ այլ հիմակուան բաժանման վերջ տալով դարձեալ միաբանեցունել մեղմիկ ճամբաներով, որպէս զի ետքէն բրոբականտայն իւր ընկելիքը դարձեալ առաջ տանի աւելի բռնաւոր կերպավի ըսել է որ թլիւյիմ խաւրուեցաւ իրերւ Աղ դին հաճոյական մարդ մը անուշիկ երեսովը խարելու Աղգը, եւ որոպայթի մէջ ձգելու, որ իւր իրաւունքներէն եւ կենայ, եւ կուրօրէն հնաղանդի Պապին բացարձակ կամացը, որուն ուռջեւը բաց պիտի ըլլայ եւ արձակ հրամանայ ասպարէղը ամեւ

նայն լմնդարձակութեամբ ։ Ահաւասիկ թլիւյիմին քաղցրախօսիկ բանքն «Աղգային իրաւունքները դոհութին նէ ալ, բան մըչէ, սիրելիք իմ։ Սրբազան հօրը կամքը առաջ երթայ, դուք ալ անվարձ չէք մնար Աստուծոյ արքայութեան մէջ ձեր այս որդիական հնաղանդութեանը համար ։ Մեր սուրբ Հօրը դթոս սիրալ աեմնելով որ իւր սիրելի որդւոց մէջ հերձուածի սերմն ընկած է, եւ որ բաերնուն մէջ Մատօնի հունտերը սկսած են ծիլլու, սուրբ Հայրը իմխոնարհութիւնս ձեզի խրկեց խոստանալով, որ ինքը սուրբ Հայրը զձեղ հայրաբար կը հոգայ, եւ առատ ներոզութիւններով զձեղկը լցնէ, որ ասկէ ետքը ամենքդ ըլլաք եկեղեցւոյ հարացատ որդիք, եւ թէ որ ամսոհեմ եկեղեցականներէն գրդուուելով ըմբոստութիւններ ըրեք նէ առ, սուրբ Հայրը իրեն ողորմած պրտոլի ամենուդ բողոքութիւն կուտայ, եւ որպէս զի այս բարի ժողովրդեան մէջ ասոնց նման հերձուածի որոմն մէյմն ալ չպատահի, այդ անխոհեմ եկեղեցականներըն ալ պիտի պատժեմ կանոնական կերպով, եւ բանագրանաց կայծակները իրենց գլխուն վրայ պիտի թափեմ» ։

Եւ այս կակուղ քաղցրաբանութիւնները ի՞նչ պէս լաւ կը միաբանին փետր, 18 ին թլիւյիմին դալուստը իմացունող հեռագրաց սպառնալից եւ որոտընդուստ խօսքերուն հետ։ Բայց անշուշտ ժողովուրդը չխարուիր այս խարէական խօսքերէն, եւ իւր գիտյածէն եւ իւր մտաց համողումէն ետք կենար, եւ անոր նո՞ւ բոսում ո՞ւսին դէմ իւր նո՞ւ բոսում ո՞ւսին կը դնէ ։

Այս՝ անցաւ ծածկութեան ժամանակը ։ Հը

բապարակաւ կը դործէ բրօբականտայն, հրապարակաւ կ'անարդէ զմեղ, եւ կ'արհամարէ եւ առաջի աշխարհի անպատիւ կ'ընէ մեր եպիսկոպոսունքը եւ մեր ժողովրդեան մեծամեծները, որոնք Աղդիս միշտ բարերար եղած են, ուրեմն եւ մեք հրապարակաւ բողոքեմք իրեն դէմ, եւ հանդէսառն կերպով մերժեմք եւ բաղոքեմք իրեն մեր իրաւանց դէմ գործածած անլուր բռնաբարութեանց դէմ։ Այս' սաստկապէս եւ անպատրուակ բողոքեմք բրոբականտայի ինքնակամ եւ ինքնիշխան ընթացիցը դէմ, որուն օրէնք՝ իւր կամքն է եւ հաճոյքը։ Գիտէինք մինչեւ հիմա թէ Աղդիս ամենայն չարեաց պատճառ բրօբականտայն է, բայց բերներնուս մէջ զը պտուցունէնք եւ ականջէ աշկանջէ աշկանջէ կը հծծէինք միայն, եւ չէինք համարձակեր յայտնապէս զուրցելու զայն եւ հրատարակելու։ բայց հիմա հասած է ատենք, որ ամեն բան յայտնուի եւ ընդ աշխարհ ամենայն հոչակուի։ Մեր ազգային ինդրոյն ոյժը հէմա այդ յայտնութեան վրայ կեցած է, որ մեր հակառակորդէն ազատինք։ Ալ ուստի՞ այսուհետեւ երկիւղ, ահա Օսմանեան Պետութիւնս ինքն մեզի իրբեւ իւր հատատարիմ հպատակաց հովանաւոր է եւ պաշտպան, եւ ընդմեզ միակամ եւ միաբան կ'ուզէ անփոփոխ եւ անխախտ պահել տալ մեր Արեւելեան եկեղեցւոյս հայրապետական Աթոռուոյց » իրաւունքները, որք իւր քաղաքական իրաւանց հետ անմիջական յարաբերութիւն ունին։ Զօրաւոր եւ խրախուսական է ժողովրդեանս դիրքը։ Արդէն իսկ սկսաւ իւր արիական պատերազմը, որուն դրօշը համարձակ բացաւ։ ոչ ազաքէն վատութիւն է ետ քաշուիլ։

Ամեն օր յամեն կողմանց լսածը ոչ այլ ինչ է, բայց այս լրախուսական ձայնը։ Էցացն Հայութ՝ Քաղաքացուն Հայութ ։ Ազգիս համբաւը բոլոր Եւրոպա հընչեց, եւ բոլոր Եւրոպա մեզ հանդիսատես է եւ ձեռնտու։ Ահա օրադիրը Աղդիս եւ օտարայ, ժողովրդոց կարծիքը միանդամայն մեզի խրախուս կը կարգան, եւ գովեստներ կուտան մեր քաջասիրտ նահատակութեանը ընդդէմ մեր հարստահարող բրոբականտայի։

Ոչ ահա եւ Արեւելք ողջոյն, եւ մեր հայրենակից Ասիացիքն բովանդակ եթէ Ասորիք, եթէ Քաղղէացիք, եթէ Մելքիքիք, եթէ Մարտիքիք եւ եթէ Մարտիքիք ձանձրացեալք եւ տաղակացեալք ՚ի նմին բրոբականտայէ մեր քաջասիրտ դիմակալութեանը կը սպասեն անձկով, որպէս զի եւ նոքա ընդ մեզ պատերազմակից ըլլան։ Ոչ ահա եւ նոյն իսկ Հոռվանց Տիեզերական ժողովոյն միգամած եւ ամպապատճակութեանը մէջէն կը լսեմք մեծամեծ գանդատանայ գորդումները բրոբականտայի բռնածնամբուն դէմ, նոյն իսկ Ամերիկեան միսիոնարք չե՞ն մի բոլոքեր կոր։

Ահաւասիկ Օսմանեան պետութեան հաստատած եւ ՚ի գործ իսկ գրած կրօնից լիտկառար ազատութիւնը, եւ միանդամայն Աղդիս ձեւայած միահեծան կաթողիկոսութիւնը հանդերձ միաբանութեամբ իրեն գաւառական եպիսկոպոսաց, եւ անխոնջ գործունէութեամբ դաս դաս մենաստանց եւ վանօրէից բաւական չեն զաղու իրեն կրտսերութենէ (մինօրիթէ) հանել եւ ստանալ իւր աւագութիւնը (մաժօրիթէ), իրբեւ զամենայն քրիստոնեայ աղջու, եւ իւր նախկին Արեւելական

եկեղեցւոյն ինքնիշխան իրաւասութիւնը ՚ի ձեռը բերելու, որով հաստատած եւ ծաղկեցուցած էր իւր սեփական եկեղեցական ծէսերը եւ արարողութիւնները : Անցաւ ուրեմն իւր այլալեզու դայեկին եւ աննատուին անպէտ խնամքները, որուն միջամտութիւնը աւելի շփոթից պատճառք են հիմա, քան թէ խաղաղութեան :

Յիշաւի արդար է եւ լի իրաւամբ ժողովրդեան այդ պահանջքը եւ օրինաւոր իւր անկախ ազտառութեան խնդիրքը : Յարատեւ պնդելու է, եւ ոչ երբէք դադրելու է իւր պահանջմունքէն, որ է իւր ազգային իրաւանց եւ սովորութեանց լիահասար պահպանութիւնը : Գոչեմք միաբերան թէ Հոգվածական եմք հաւատոյ դաւանութեամբ, եւ հաւատակից կաթողիկէ ժողովրդոց բովանդակ տիեզերաց, բայց մեր ազդային իրաւունքներէն մազիւ չափ չեմք հրաժարիր, որ մեր ի հարց մերոց աւանդեալ ժառանգութիւնն է . այո, մերն է եւ մեր զաւակացը, զոր մեր հարքն մեղ ժառանգեցուցին, զնոյն եւ մեք մեր որդւոցը պիտի ժառանդեցունեմք : Բրոբականտայն կ'ուզէ մեր ձեռքէն բանաբարել այդ իրաւունքները արմատաքի . սակայն այն դիւցազնական եւ անսասան նահատակութիւնը պատուար պիտի կանգնեմք անոր բռնաբարութեանց դէմ, ինչ որ դըին մեր հարքը, յորոց բաղումք դեռ կենդանի են, անոնց դէմ որք զիրաւունս խղճի հաւատոց կ'ուզէին բռնաբարել եւ բռնադատել : Իրաւանց վրայ նահասակելիք կրօնական զզ ացում մըն է : Լաւ դիւտեմք միոց բռնու զանազանել եւ տալ զկայսերն կայսեր չեւ զԱստությն Աստուծոյ :

ՀՀ Ազգային գրադարան



NL0242608

